ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿ, ԼՈՌԻ, ՏԱՎՈՒՇ

Աղքատության նվազեցում համայնքներում. կիրառական մոտեցումներ

Ամփոփագիր և հիմնական եզրակացություններ

Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացվող «Աղքատության նվազեցում համայնքներում. կիրառական մոտեցումներ» ծրագրի շրջանակներում ՏՋՀԿ-ն 2021-2022 թվականների ընթացքում իրականացրել է Հայաստանի Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերում բազմաչափ աղքատության կրճատմանն ուղղված պետական բյուջետային ծրագրերի և դրանց ազդեցությունների ուսումնասիրություն: Մասնավորապես, քննության են ենթարկվել բազմաչափ աղքատության վրա հնարավոր ուղղակի ազդեցություն ունեցող ռազմավարական և բյուջետային քաղաքականությունների շրջանակները և դրանց ազդեցությունները, ուսումնասիրվել են շահառու մարզերի բնակչության հիմնական կարիքները և դրանց բավարարմանն ուղղված հանրային ծառայությունները, դրանց հասանելիության և օգտագործման մակարդակները: Արդյունքները ամփոփ ներկայացված են ստորև՝ ըստ հիմնական ուղղությունների:

Բազմաչափ աղքատության վրա ազդեցության պոտենցիալ ունեցող բյուջետային ծրագրերի ֆինանսավորումը

Հիմնական կարիքներ	118,904 մլն դրամ	31,1%
Բնակարանային պայմանների բարելավում	34,619 մլն դրամ	9,1%
Կրթության կարիք	134,785 մլն դրամ	35,3%
Աշխատանքի և զբաղվածության կարիք	1,856 մլն դրամ	0,5%
Առողջապահության կարիք	91,853 մլն դրամ	24,0%

Ընդամենը **382,017** մլն դրամ

Ընդամենը **17.2%** պետական բյուջեում

2022 թվական, տարեկան ճշտված պլան՝ ինն ամիսների դրությամբ

Ռազմավարական և բյուջետային քաղաքականությունների շրջանակի նկարագիրը

- Բազմաչափ աղքատության կրճատմանն ուղղված քաղաքականությունները ձևակերված են մի շարք սոցիալական, տնտեսական և ենթակառուցվածքային զարգացման պետական ռազմավարական փաստաթղթերում՝ ռազմավարություններ, հայեցակարգեր և ծրագրեր: Դրանք արտահայտված են նաև համապատասխան ոլորտները կարգավորող պետական մարմինների կողմից իրականացվող բյուջետային ծրագրերում:
- Բազմաչափ աղքատության վրա ուղղակիորեն ազդեցություն ունեցող բյուջետային ծրագրերի/միջոցառումների ֆինանսավորումը 2022 թվականին կազմում է ՀՀ պետական բյուջեի 17.2 տոկոսը կամ 382.0 մլրդ դրամ: Այս ծրագրերի կառուցվածքում գերակշռում են կրթության և բնակչության հիմնական կարիքներին ուղղվող ռեսուրսները:

- Կրթության մատչելիության նպատակ հետապնդող բյուջետային հիմնական ծրագրերին ուղղվող ֆինանսական միջոցներն էապես աճել են՝ մոտ 25.9 մլրդ դրամով: Արդյունքում նախատեսվում է, որ կաճեն դպրոցական կրթության համակարգում ընդգրկվածության, կրթական հաստատությունների ֆիզիկական հասանելիության ցուցանիշները: Արդեն 2024 թվականի համար թիրախավորվում են կրթական ծառայությունների որակի և հասանելիության էական աճ՝ պարտադիր կրթության համակարգում 99 տոկոս ընդգրկվածություն, նախադպրոցական հաստատություններում՝ 70 տոկոս ընդգրկվածություն, մարզերում բոլոր նախակրթարանների և տարրական դասարանների սովորողներին կայուն դպրոցական սննդով ապահովում:
- Բնակչության հիմնական կարիքների բավարարմանն ուղղված պետական միջամտություններին ուղղվող միջոցները ևս աճում են 8.3 մլրդ դրամով՝ հանգեցնելով այս ծրագրերի շրջանակներում աջակցություն ստացող ընտանիքների և անձանց թվաքանակի կտրուկ աճի:
- Բնակչության բնակարանային պայմանների բարելավման ծրագրերի արդյունքում բնակարանի ապահովման աջակցություն կստանան ավելի քան 16,000 ընտանիքներ, որը նախորդ տարվա մակարդակը գերազանցում է ավելի քան 2 անգամ: Շահառուների թվաքանակի կտրուկ աճը պայմանավորված է երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աջակցության շահառուների թվաքանակի աճով:
- Աշխատանքի և զբաղվածության կարիքին է ուղղված Զբաղվածության ծրագիրը: Ծրագրի նպատակը բնակչության կայուն և ժամանակավոր զբաղվածության ապահովմանը միտված պայմանների ստեղծումն է: Այս ուղղությամբ ծախսվող պետական ռեսուրսները բավականին համեստ են և կազմում են ընդամենը 1.9 մլրդ դրամ: Ծրագրին ուղղված ռեսուրսների ավելի քան 45.5 տոկոսը նախատեսված է ուղղել աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրմանը և երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար դայակի ծառայությունների տրամադրմանը:
- Առողջապահական կարիքին ուղղվող պետական բյուջետային ռեսուրսները նախորդ տարվա համեմատությամբ աճել են: Աճը գերազանցապես պայմանավորված է սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնությանը և մոր ու մանկան առողջության պահպանմանն ուղղվող ռեսուրսների ավելացմամբ: Էապես աճել են մանկաբարձական բժշկական օգնությունից օգտվողների քանակը: Աճել է նաև մարզեր ուղեգրվող բժիշկների թվաքանակը՝ նախորդ տարվա 9 բժշկի փոխարեն մարզեր են ուղեգրվել 50 բժիշկ:

Դպրոց չհաճախող երեխա ունեցող բնակավայրեր, տոկոս բնակավայրերի մեջ



Աղբյուր՝ ՏՀՀԿ Բ3 հետազոտություն

ԱՍՀՆ կողմից մատուցվող զբաղվածության հետևյալ ծառայություններից SS-ների տեղեկացվածությունը, տոկոս

	Լոռի	Շիրակ	Տավուշ
Գործազուրկների մասնագիտական ուսուցում	34.1	37.9	49.8
Վարձատրվող հասարակական աշխատանքներ	30.4	26.3	32.4
Փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցություն	23.5	12.0	28.6
Գործատուին միանվագ փոխհատուցում՝ անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում	21.3	7.0	19.3
Երեխայի խնամքը կազմակերպելու համար դայակի ծախսերի տրամադրում	29.7	21.9	44.4
Գյուղացիական տնտեսությանն աջակցություն՝ սեզոնային զբաղվածություն	28.6	21.9	26.2
Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների համար դասընթացներ	25.2	8.1	27.7

Աղբյուր՝ ՏՀՀԿ Բ3 հետազոտություն

Բժշկական միջամտության անհրաժեշտություն ունեցող SS-ները, որոնք չեն դիմել բժշկի, տոկոս



Աղբյուր՝ ՏՀՀԿ Բ3 հետազոտություն

- Շահառու մարզերի համայնքային բյուջետային եկամուտների մակարդակը, դրանց դինամիկան և կառուցվածքը վկայում են, որ համայնքներին բնորոշ է եկամուտների գեներացման ցածր տնտեսական ներուժ: Ընդհանուր առմամբ, Տավուշի և Շիրակի մարզերը մեկ շնչի հաշվով ամենացածր եկամուտներ գեներացնող մարզերի թվում են: Շահառու բոլոր երեք մարզերում սեփական եկամուտների կշիռը նախորդ տարվա համեմատությամբ դրսևորել է աճի վարքագիծ, սակայն այս մարզերն աչքի են ընկնում սեփական եկամուտների ցածր մակարդակով, մասնավորապես՝ Լոռին և Տավուշը:
- Համայնքներում խիստ ցածր է ֆոնդահայթայթման և տարբեր զարգացման ռեսուրսներից օգտվելու կարողությունները: Դրամաշնորհների կազմում գերակշիռ մասը՝ ավելի քան 97.6 տոկոսը կազմում են ներքին դրամաշնորհները, այսինքն՝ պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրամադրվող դոտացիաները և սուբվենցիաները: Արտաքին դրամաշնորհների մակարդակը շատ փոքր է:
- Կառավարության կողմից հաստատված սուբվենցիոն ծրագրերի համաձայն 2022 թվականին շահառու մարզերում սուբվենցիաների ծավալները զիջում են 2019-2021 թվականների միջին տարեկան մակարդակները:
- Իրականացվող սուբվենցիոն ծրագրերն իրենց բնույթով գերազանցապես բազմաչափ աղքատության կրճատման պոտենցիալ ունեն: Նկատենք, որ բոլոր երեք մարզերում մեծ է համայնքային ճանապարհների կառուցմանը և վերանորոգմանը միտված ծրագրերի կշիռը: Հետևում են փողոցային լուսավորության համակարգերի, խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման և նորոգման ծրագրերը:
- Համայնքների ընդամենը ծախսերի կառուցվածքում շարունակում են մեծ կշիռ կազմել համայնքապետարանի պահպանմանը և համայնքային ծառայողների աշխատավարձերին ուղղվող ծախսերը, չնայած այս ցուցանիշը վերջին տարիներին հիմնականում նվազման վարքագիծ է դրսևորում: Հաջորդում են «Կրթություն», «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ» և «Տնտեսական հարաբերություններ» գործառական ոլորտները:
- Համայնքային կրթական ծախսերի գերակշիռ մասը՝ մոտ 70.4 տոկոսն ուղղվում է նախադպրոցական կրթությանը: Սոցիալական ծրագրերի իրականացմանն ուղղվող բյուջետային ռեսուրսները կազմում են մոտ 1 տոկոս, առողջապահական ծրագրեր համայնքների կողմից գրեթե չեն իրականացվում:
- Ռազմավարական քաղաքականությունների շրջանակը չնայած քննարկվող ոլորտներում սահմանում է քաղաքականությունների տարբեր մակարդակների նպատակներ, սակայն հաճախ է թերանում սահմանել նպատակների չափման և ձեռք բերման համար համապատասխան չափորոշիչներ, թիրախային մակարդակներ և ժամկետներ: Նման իրավիճակը հնարավորություն է ստեղծում խուսափել կամ հետևողական չլինել սահանված արդյունքների ձեռք բերման նկատմամբ:

Մեկ շնչի հաշվով համայնքային ամփոփ եկամուտների մակարդակը և աճը



2022 թվականը՝ առաջին կիսամյակի դրությամբ տարեկան ճշտված պլան
Աղբյուր՝ ՀՀ ՏԿԵՆ և ՏՀՀԿ հաշվարկներ

Համայնքների սեփական եկամուտների կշիռը համայնքային ամփոփ եկամուտների կառուցվածքում



2022 թվականը՝ առաջին կիսամյակի դրությամբ տարեկան ճշտված պլան
Աղբյուր՝ ՀՀ ՏԿԵՆ և ՏՀՀԿ հաշվարկներ

Պետական սուբվենցիաների (կապիտալ) ծավալների համեմատական՝ 2019-2022թթ., մլն. դրամ



*2022 թվականը 15.10.2022թ. դրությամբ
Աղբյուր՝ ՀՀ կառավարության որոշումներ և ՏՀՀԿ հաշվարկներ

- Իրականացվող բյուջետային ծրագրերը միշտ չէ, որ ընդգրկում են համապատասխան քաղաքականություններով սահմանված նպատակները և արդյունքները, և նպաստում դրանց իրականացմանը:
- Բյուջետային ծագրերի՝ քաղաքականություններին համապատասխանության պարբերական գնահատումը, սահմանված քաղաքականությունների կատարման նկատմամբ վերահսկողությունը և պատասխանատվությունը՝ ռազմավարական քաղաքականութունների կենսունակության և ժառանգականության ապահովման կարևոր խնդիրներից են, որոնք չնայած անտեսված չեն և որոշակի պահանջ կա կառավարության կողմից ձևակերպված, այնուամենայնիվ մնում են չիրագործված:
- Ռազմավարական և բյուջետային քաղաքականությունների բովանդակության շուրջ հանրային երկխոսությունը կրում է ոչ բավարար որակ: Աստիճանաբար աճում է ՔՀԿ-ների դերը և ակտիվ մասնակցության կարևորությունը թե՛ բյուջետային ծրագրերի, թե՛ քաղաքականությունների իրականացման մոնիտորինգի և գնահատման գործընթացներում:

Հանրային ծառայությունների օգտագործումը, հասանելիությունը և կարիքը

- Շահառու մարզերի կազմում կրթության բարձր մակարդակով աչքի է ընկնում Շիրակի մարզը: Ընդ որում, բոլոր երեք մարզերում կանանց կրթամակարդակն ավելի բարձր է տղամարդկանց համեմատ:
- Գործազրկության մակարդակն ամենացածրը Շիրակի գյուղական բնակավայրերում է՝ 16.7 տոկոս, իսկ ամենաբարձրը՝ Լոռու քաղաքային բնակավայրերում՝ 37.7 տոկոս: Կանանց և տղամարդկանց գործազրկության մակարդակը համապատասխանաբար կազմում է 35.7 և 14.4 տոկոս: Կանանց գործազրկության ամենաբարձր մակարդակն արձանագրվել է Տավուշում, իսկ տղամարդկանց գործազրկության ամենացածր մակարդակը՝ Շիրակում:
- Մեծ է սեփական գյուղացիական տնտեսություններում և պետական/համայնքային հիմնարկներում զբաղվածների կշիռը՝ համապատասխանաբար 35.2 և 30.5 տոկոս: Ընդ որում, սեփական գյուղացիական տնտեսությունում զբաղվածությունը բարձր է մասնավորապես Լոռու մարզում, ինքնազբաղվածությունը համեմատաբար բարձր է Շիրակում, իսկ պետական/համայնքային հիմնարկներում և այլ մասնավոր հատվածում զբաղվածությունը՝ Տավուշում:
- Տնային տնտեսությունների (այսուհետ նաև՝ SS) գնահատականներով, աղքատությունը 2021 թվականին բոլոր երեք մարզերում խորացել է: Իրենց աղքատ կամ ծայրահեղ աղքատ գնահատած SS-ների կշիռը Լոռիում աճել է 5.8, Շիրա-

Շահառու մարզերում իրականացվող սուբվենցիոն ծրագրերը, 2022 թվական, մլն դրամ

	Լոռի	Շիրակ	Տավուշ
Փողոցային լուսավորության համակարգի կառուցում/նորոգում	102.1	172.6	39.6
Ճանապարհների կառուցում/նորոգում	194.5	328.5	376.1
Խմելու ջրամատակարարման, ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում	168.4	25.8	16.7
Շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում և էներգաարդյունավետության բարձրացում	50.4	24.6	-
Բնակավայրերի գազաֆիկացում	43.0	-	13.0
Մանկապարտեզների կառուցում/նորոգում	78.3	-	-
Այլ	63.8	-	45.3
Ընդամենը	700.6	551.4	490.7

*2022 թվականը 15.10.2022թ. դրությամբ
Աղբյուր՝ ՀՀ կառավարության որոշումներ և ՏՀՀԿ հաշվարկներ

Գործազրկության մակարդակն ըստ շահառու մարզերի, տոկոս



Աղբյուր՝ ՏՀՀԿ Բ3 հետազոտություն

Գործազրկության մակարդակն ըստ բնակչության առանձին խմբերի, տոկոս (փակագծերում՝ ստանդարտ սխալի մակարդակներն են)

	Լոռի	Շիրակ	Տավուշ
Գյուղ	19.1 (± 2.41)	16.7 (± 2.30)	25.3 (± 2.18)
Քաղաք	37.7 (± 2.58)	35.7 (± 2.58)	29.4 (± 2.38)
Տղամարդ	16.7 (± 2.57)	12.0 (± 2.48)	14.7 (± 2.32)
Կին	34.5 (± 2.42)	34.0 (± 2.39)	38.3 (± 2.23)
Բարձրագույն	23.9 (± 4.89)	19.6 (± 4.23)	24.6 (± 4.40)
Միջին մասնագիտական	26.8 (± 4.42)	25.1 (± 4.29)	25.6 (± 3.64)
Միջնակարգ	28.6 (± 2.71)	27.7 (± 2.74)	29.7 (± 2.68)

Աղբյուր՝ ՏՀՀԿ Բ3 հետազոտություն

կում՝ 1.0, իսկ Տավուշում՝ 4.5 տոկոսային կետով: Զուգահեռ նվազել են իրենց «ապահովված» համարող ՏՏ-ները՝ Լոռիում՝ 1.3, Շիրակում՝ 0.6, իսկ Տավուշում՝ 2.5 տոկոսային կետով:

- Ընդհանուր առմամբ, Լոռու, Տավուշի և Շիրակի բնակչությունը ծանրաբեռնված է պարտքային պարտավորություններով: ՏՏ-ների 65.6 տոկոսն ունեն վարկային կամ պարտքային տարբեր պարտավորություններ: Ընդ որում, մեկ ՏՏ հաշվով պարտքային պարտավորությունների միջին մեծությունը կազմում է մոտ 1.9 միլիոն դրամ: Առկա պարտքի սպասարկման բեռը ավելի ծանր են գնահատում Լոռու մարզում:
- Շահառու մարզերի ՏՏ-ների մոտ 29 տոկոսը թերսնվում է: Իրավիճակը համեմատաբար ավելի սուր է Լոռու մարզում, որի գյուղական համայնքներում սննդի ծախսերը «ընդհանրապես» կամ «գրեթե» չեն կարողանում բավարարել ՏՏ-ների 37.6 տոկոսը, իսկ քաղաքային բնակավայրերում՝ 35.9 տոկոսը:
- Առողջապահական ծախսերը չեն կարողանում բավարարել շահառու մարզերի ՏՏ-ների 51 տոկոսը:
- Երեխաների խնամքի և սոցիալական աջակցության ծառայություններից ամենահասանելին մանկապարտեզների ծառայություններն են: Դրանցից օգտվում են շահառու մարզերի 2-6 տարեկան երեխաների 43.5 տոկոսը: Նախադպրոցական և դպրոցական կրթության որևէ ծառայություններից չի օգտվում 2-6 տարեկան երեխաների 37.7 տոկոսը, կամ համապատասխան տարիքային խմբի երեխաներ ունեցող ՏՏ-ների՝ 43.6 տոկոսը:
- Հետազոտությունում ընդգրկված համայնքներից 72 տոկոսում, առկա է դպրոց չհաճախող հաշմանդամություն ունեցող առնվազն մեկ երեխա, իսկ 48 տոկոսում՝ ոչ հաշմանդամություն ունեցող դպրոցական տարիքի առնվազն մեկ երեխա, որը դպրոց չի հաճախում:
- Երեխաների խնամքի և երկրում ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված քաղաքականությունների մասին շահառուների տեղեկացվածության մակարդակը բավականին բարձր է: Առավել հայտնի է «երեխայի ծննդյան միանվագ նպաստի տրամադրման» քաղաքականությունը՝ տեղեկացված է ՏՏ-ների մոտ 85 տոկոսը, և «երրորդ և ավելի երեխայի համար մինչև 6 տարեկան լրանալը ամսական 50,000 դրամ նպաստի տրամադրման քաղաքականությունը»՝ տեղեկացված է՝ 75.5 տոկոսը: Իրականացվող քաղաքականությունների ազդեցությունը ՏՏ-ներում երեխա ունենալու վերաբերյալ որոշում կայացնելու վրա ցածր է:
- Ցածր է տեղեկացվածությունը «չաշխատող մայրերին տրամադրվող մայրության նպաստների» և «երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահով-

Տնային տնտեսությունների կենսամակարդակի սուբյեկտիվ ինքնագնահատականներ, տոկոս



Աղբյուր՝ ՏՀՀԿ Բ3 հետազոտություն

Պարտքային պարտավորություն ունեցող ՏՏ կշիռը և պարտքի միջին մեծությունը



Աղբյուր՝ ՏՀՀԿ Բ3 հետազոտություն

Սննդի ծախսերի ապահովման սուբյեկտիվ գնահատականներ, տոկոս



Աղբյուր՝ ՏՀՀԿ Բ3 հետազոտություն

Ծախսերի ապահովման կարողության սուբյեկտիվ գնահատականներ, տոկոս



Աղբյուր՝ ՏՀՀԿ Բ3 հետազոտություն

ման հիպոթեքային աջակցության» ծրագրերի մասին: Ընդհանրապես, շահառու մարզերում պետական աջակցությամբ բնակարանների ձեռքբերման ծրագրերից օգվողների քանակը փոքր է:

- Ցածր է նաև ԱՍՀՆ կողմից իրականացվող զբաղվածության տարբեր ծրագրերի մասին բնակչության թե՛ տեղեկացվածության և թե՛ դրանցից օգտվելու մակարդակը, այդ թվում հաշմանդամություն ունեցող անձանց կողմից. հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող աշխատանքի տեղավորման ծառայություններից երբևիցե օգտվել են շահառու մարզերում հաշմանդամություն ունեցող անձանց ընդամենը 3.5 տոկոսը:
- Պետական պատվերի շրջանակներում տրամադրվող բժշկական ծառայությունների մասին շահառու բնակչության տեղեկացվածության մակարդակը բարձր չէ: Սոցիալապես անապահովներին և հատուկ խմբերում ընդգրկվածների տրամադրվող հիվանդանոցային ծառայությունների անվճար լինելու մասին տեղեկատվությանը տիրապետում է SS-ների 68.2, իսկ նպաստառու SS-ների 75.9 տոկոսը:
- Ընդհանուր առմամբ, շահառու մարզերում իրականացվող պետական բյուջետային ծրագրերի մասին տեղեկացվածության մակարդակը ցածր է: Այն համեմատաբար բարձր է Տավուշի մարզում:
- Հետազոտությանը նախորդած 12 ամիսների ընթացքում շահառու մարզերի բոլոր SS-ների 10 տոկոսում և նպաստառու SS-ների 29.7 տոկոսում SS անդամներից առնվազն մեկն ունեցել է բժշկական միջամտության և բժշկական ծառայությունների ստացման կարիք, սակայն չի դիմել բժշկի: Բժշկի չդիմելու գլխավոր պաճառը SS-ների 70 տոկոս դեպքերում ֆինանսական է, 8 տոկոս դեպքերում՝ բժիշկներին անվստահությունն է, 4 տոկոս դեպքերում՝ բժշկական հաստատությունը բնակավայրից հեռու գտնվելը:
- Հաշմանդամություն ունեցող անձանց կողմից բժշկական օգնության և վերականգնման պետական ծրագրերից օգտվելու մակարդակը բարձր չէ: Երբևիցե պետական բյուջետային ծրագրերից օգտվել են շահառու մարզերի հաշմանդամություն ունեցող բնակչության ընդամենը 32.1 տոկոսը: Դեղորայքի կարիք ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց 47.8 տոկոսն օգտվել է անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղերից:
- Շահառուների գնահատմամբ աշխատատեղերի բացակայությունը, առողջապահական ծառայությունների ոչ բավարար մակարդակը և ներհամայնքային ճանապարհների վատ վիճակը շարունակում են մնալ համայնքներում բնակչության առջև ծառացած ամենակարևոր երեք խնդիրները:

Սոցիալական ընտրված քաղաքականություններից տեղեկացվածության մակարդակը, տոկոս



Սոցիալական քաղաքականությունների ազդեցությունը SS-ում երեխա ունենալու որոշման վրա, տոկոս



Աղբյուր՝ ՏՀՀԿ Բ3 հետազոտություն

SS տեղեկացվածությունը սոցիալապես անապահովներին և հատուկ խմբերում ընդգրկվածների տրամադրվող հիվանդանոցային ծառայությունների անվճար լինելու մասին, տոկոս



Աղբյուր՝ ՏՀՀԿ Բ3 հետազոտություն

- Առանձնացված սոցիալական ծառայություններից շահառու մարզերի բնակչության կարիքը բարձր է գնահատվում հատկապես որակյալ բժշկական ծառայությունների, մատչելի դեղերի, երիտասարդների և տարեցների զբաղվածության, ինչպես նաև տարեցներին մատուցվող սոցիալական ծառայությունների մասով:
- Մատուցվող առողջապահական ծառայությունների բարելավման տեսանկյունից ՏՏ-ները մի կողմից կարևորում են բժշկական ծառայությունների մատչելիությունը, մյուս կողմից՝ ավելի որակյալ բժշկական սպասարկող անձնակազմի առկայությունը մարզերում:
- Զբաղվածության բարելավման հնարավորությունները բնակչությունը գերազանցապես կապում է լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման հետ՝ մոտ 86 տոկոս: Ուշագրավ է, որ բնակչության ավելի քան 20 տոկոսը իր համայնքի բնակչության զբաղվածության բարելավման հնարավորությունները կապում է աշխատատեղերի պահանջներին համապատասխան պրակտիկ հմտությունների ձևավորմանը և լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցության հետ: Եթե քաղաքային բնակչությունը զբաղվածության մեծացման համար կարևորում է աշխատող ծնողների երեխաների համար խնամքի լրացուցիչ ծառայությունների ստեղծումը, ապա գյուղական բնակչության համար էական է լրացուցիչ փոխադրման/տրանսպորտային ծառայությունների առկայությունը դեպի աշխատանքի վայրեր:
- Երեխաներին աջակցության և դաստիարակության բարելավման տեսանկյունից բոլոր երեք մարզերում առավելապես կարևորվում են այգիների, պուրակների և խաղահրապարակների առկայությունը, ինչպես նաև՝ ամառային հանգստի ծրագրերը և ճամբարները:
- Տարեցների համար զբաղվածության հնարավորությունները և տարեցներին սոցիալական ծառայությունների մատուցումը հատկապես կարևորվել է Լոռու գյուղական բնակավայրերի ՏՏ-ների կողմից: Ընդ որում, տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության բարելավման տեսանկյունից բոլոր երեք մարզերում էական են համարվել տնային պայմաններում առողջապահական, ինչպես նաև՝ տնային օգնության/խնամքի ծառայությունների մատուցումը: Լոռիում և Տավուշում կարևորվել են նաև սննդի առաքման ծառայությունները:
- Համայնքային ծառայություններից բոլոր երեք մարզերում համեմատաբար ավելի մեծ կարևորություն ունեն ներհամայնքային ճանապարհների վիճակը, փողոցային լուսավորության և աղբի ժամանակին հավաքման ծառայությունները: Համայնքապետարանի կողմից բնակչության տրամադրվող տեղեկատվությանը, նաև աջակցությանը մեծ կարևորություն չեն տալիս:

Հանրային ծառայությունների բարելավման ուղղություններն ըստ շահառուների



Աղբյուր՝ ՏՀՀԿ Բ3 հետազոտություն

- Ուսումնասիրված SS-ների մոտ 40 տոկոսը գտնում է, որ իրենց համայնքային խնդիրները կարող են լուծվել միայն կառավարության միջնորդությամբ:
- Համայնքներում իրականացվելիք ծրագրերի մասին տեղեկացվածության մակարդակը ցածր է, միջինում տեղեկացված են SS-ների 4.1 տոկոսը: Համանքապետարանի կողմից համայնքային ծրագրերի քննարկումների կազմակերպման վերաբերյալ հարցին դժվարացել է պատասխանել բնակչության մոտ 47 տոկոսը, իսկ 25 տոկոսը նշել է, որ նման միջոցառումներ չեն կազմակերպվում:
- SS-ների 41 տոկոսը գտնում է, որ բյուջետային ծախսերի մասին որոշումներ կայացնելիս բնակիչների կարծիքը և ցանկությունները «հաշվի չեն առնվում»:
- Առանձնացված համայնքային միջավայրը բնութագրող ծառայություններից Տավուշի մարզում համեմատաբար բարձր է բանկերի/բանկոմատների առկայության կարիքը՝ 26 տոկոս, համայնքում փոքր բիզնես բացելու հնարավորությունների կարիքը՝ 23 տոկոս, և համայնքներում արագաչափերի օգտագործման կարիքը՝ 23 տոկոս:
- Շիրակի մարզում՝ մեծամասամբ գյուղական բնակավայրերում, SS-ները հատկապես ժամանցային վայրերի (սրճարան/բար/ռեստորան/ակումբ) կարիքի մասին են նշում՝ 20 տոկոս: Լոռու մարզի SS-ների կարիքը համեմատաբար բարձր է համայնքներում բանկերի/բանկոմատների առկայության և հանրային տրանսպորտի բարելավման մասով՝ համապատասխանաբար 22 և 19 տոկոս: Այգիների և հանգստի վայրերի առկայության կարիքը բարձր է բոլոր երեք մարզերում:

Սոցիալական ծառայությունների կարիքի գնահատականներ, տոկոս SS-ների նկատմամբ



Աղբյուր՝ ՏԶՀԿ Բ3 հետազոտություն

Համայնքային ծառայությունների կարիքի գնահատականներ, տոկոս SS-ների նկատմամբ



Աղբյուր՝ ՏԶՀԿ Բ3 հետազոտություն

Համայնքային միջավայրը բնութագրող ծառայությունների կարիքի գնահատականներ, տոկոս SS-ների նկատմամբ



Աղբյուր՝ ՏԶՀԿ Բ3 հետազոտություն

Հիմնական եզրակացություններ

- Ստացված հիմնական արդյունքները և բացահայտումներն անսպասելի չեն: Թեև հիմնական միտումները պահպանվում են, սակայն սկսվել են նկատվել որակական նոր զարգացումներ:
- Բնակչության եկամուտների մակարդակը ցածր է, պարտքային պարտավորությունները և ծանրաբեռնվածությունը՝ շատ բարձր: Ընդ որում, ըստ հետազոտված բնակչության, իրավիճակը վերջին տարիներին վատթարացել է: Հատկապես անհանգստացնող է թերսնուցման բարձր մակարդակը:
- Կրթության որակի և հասանելիության նկատմամբ բնակչության գոհունակության մակարդակը ցածր չէ: Սակայն, շահառու բնակավայրերի գերակշիռ մասում կան կրթական համակարգից դուրս մնացած երեխաներ: Նախադպրոցական կրթությունը և արտադպրոցական կրթությունը մեծ պահանջարկ է սկսել ստանալ, որը ՏՏ-ների մեծ մասի համար մնում է անհասանելի: Կարևորվում է երեխաների ամառային հանգստի կազմակերպումը և ճամբարների հասանելիությունը:
- Դժգոհություններն առավել մեծ են առողջապահական ծառայությունների որակի նկատմամբ: Որակյալ առողջապահության մատչելիությունը, փորձառու և որակյալ մասնագետների պակասը մնում է գերխնդիր:
- Թեև, ընդհանուր առմամբ աշխատատեղերի հասանելիությունը և զբաղվածության ապահովումը կարևորվում է, սակայն բնակչությունը սկսել է շեշտադրել վերապատրաստման և նոր գիտելիքների ձեռքբերման, ֆինանսական գրագիտության բարձրացման անհրաժեշտությունը:
- Ուշագրավ է, որ աճում են նաև համայնքային կյանքի որակի և միջավայրի բարելավմանն ուղղված պահանջները: Մասնավորապես, շատերը շեշտադրում և կարևորում են ճանապարհների որակը, փողոցների բարեկարգումը և լուսավորությունը, պուրակների, զբոսայգիների և խաղահրապարակների առկայությունը, ժամանցի վայրերը և հանրային սպասարկման օբյեկտների (ռեստորաններ, սրճարաններ և ակումբներ) առկայությունը գյուղական և փոքր քաղաքային համայնքներում: Նմանատիպ պահանջներն առավել մեծ գերակայություն են սկսել ստանալ, որը հուշում է կյանքի որակի առավել բարձր պահանջների մասին:
- Համայնքային ռեսուրները և ներուժը մնում են ցածր՝ բնակչության պահանջները և սահմանվող նշածողերը հասցեագրելու համար: Բնակչությունը փոփոխություններ ակնկալում է ոչ թե համայնքային կառավարման մարմիններից, այլ, ավելի շուտ՝ կառավարությունից: Սակայն, համայնքային մակարդակում բյուջետային և այլ ծրագրային որոշումներին և դրանց կայացման մասնակցությանը մեծ կարևորություն է տալիս:

Զեկույցի բովանդակություն

ԱՄՓՈՓԱԳԻՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2. ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ

3. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ
   - 3.1. Ռազմավարական քաղաքականությունների շրջանակը
   - 3.2. Բյուջետային շրջանակը
   - 3.3. Համայնքային բյուջեները և աղքատության հաղթահարման պոտենցիալը

4. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
   - 4.1. Ժողովրդագրություն
   - 4.2. Կրթամակարդակ
   - 4.3. Գործազրկություն և զբաղվածություն
   - 4.4. Միգրացիա
   - 4.5. Եկամուտներ և բարեկեցություն

5. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՐԻՔ
   - 5.1. Հանրային ծառայությունների օգտագործումը
   - 5.2. Հանրային ծառայությունների կարևորության, հասանելիության և կարիքի գնահատում
   - 5.3. Ծառայությունների բարելավման ուղղություններ

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ

- Սուբվենցիոն ծրագրերի ակտիվացման արդյունքում բյուջեների կառուցվածքում առավել մեծ կշիռ են ստացել համայնքներում կյանքի որակի բարելավմանն ուղղված միջոցառումները:
- Թեև մարդիկ շարունակում են մնալ քիչ տեղեկացված և պակաս գրագետ, սակայն տեղեկացվածությունը, գրագիտությունը և քաղաքացիական ակտիվությունը առավել մեծ կարևորություն են ստանում վերջին տարիներին:
- Զբաղվածության ծրագրերից և պետական պատվերի շրջանակներում առողջապահական ծրագրերից տեղեկացվածության մակարդակը բավականին ցածր է: Առավել լավ տեղեկացված են առկա ժողովրդագրական ծրագրերից, թեև համարվում է, որ դրանք չեն ազդում կամ շատ քիչ են ազդում ընտանիքում նոր երեխաներ ունենալու որոշումների և ծնելիության աճի վրա:
- Կարևորություն են ստանում ծերերի զբաղվածության խնդիրները, ինչպես նաև տարեցների սպասարկման և սննդի մատակարարման պահանջները:
- Ընտանիքներում բռնությունների կանխարգելման միջոցառումները քիչ են արձագանք ստանում: Փոխարենը երիտասարդության զբաղվածության, ինքնահիրացման և զարգացման, ֆիզիկական և հոգեկան առողջության ապահովման միջոցառումները դառնում են պահանջված անհրաժեշտություն:
- Այսպիսով, բազմաչափ աղքատություն երևույթը, բազմաթիվ ասպեկտներ է ներառում: Հետազոտությունը փաստում է, որ պարզ եկամտային աղքատության չափորոշիչներն այսօր ամբողջական չեն կարող նկարագրել բնակչության առկա պահանջները և կենսամակարդակը: Համայնքային կյանքը որոշակի զարգացում է ապրում՝ առաջ բերելով նոր կարիքներ և կյանքի նոր որակի պահանջներ:
- Բազմաչափ աղքատության կրճատմանն ուղղված պետական և համայնքային բյուջետային ռեսուրսները սահմանափակ են և ոչ մեծ՝ չնայած դրանց նկատմամբ աճող պահանջներին: Սահմանված ռազմավարական և բյուջետային քաղաքականությունների կապը բավարար հստակ չէ՝ թույլ է, որը կարող է պայմանավորված լինել թե՛ ռեսուրսների պակասով, թե՛ քաղաքականություն մշակողների և իրականացնողների հետևողականության պակասով: Մյուս կողմից, չնայած աճող պահանջմունքներին, դեռևս հանրությունը և քաղաքացիական հասարակության ինստիտուցիոնալ զարգացումը չեն ապահովում հանրային պահանջի ձևավորման, երկխոսության, մասնակցության և քաղաքականությունների վերահսկողության պատշաճ և ազդեցիկ մակարդակ:

Տնտեսական զարգացման և
հետազոտությունների
կենտրոն (EDRC)
+374(0) 55 540 289
info@edrc.am
www.edrc.am